ՆՈՐԻՑ «ԺԱՄԱՆԱԿԸ»



Այս էլ որերորդ անգամ կենտրոնական հեռուստատեսության «Ժամանակ» ինֆորմացիոն ծրագիրը, հավատարիմ մնալով հեռուստադիտողներին թյուրիմացության և ապակողմնորոշման մեջ գցելու իր վարքագծին, ի լուր աշխարհի ազդարարեց, թե «եղբայրական» Ադրբեջանը դադարեցրել է շրջափակումը և սկսել է թույլ տալ, որ ժողովրդատնտեսական բեռներով երկաթուղային շարժակազմերը վերջապես ճանապարհվեն իրենց նշանակման վայր: Իսկ թե իրականում ինչ արժեք ունի այդ «ծանրակշիռ» ինֆորմացիան, պարզվում է, երբ ծանոթանում ես իրողությանը:

Այդ «հավատալի» ինֆորմացիան, մեղմ ասած, հեռու է իրականությունից: Մեր «ինտերնացիոնալիստ» հարևանները, քաջատեղյակ լինելով, թե ինչպիսի ծանր կացության մեջ են դրել մեր հանրապետությանը իրենց հանցագործ վարքագծով, գոնե այժմ չեն բարեհաճել թույլ տալ, որպեսզի մեզ առաքվի այնքան անհրաժեշտ վառելանյութ և բենզին: Դրա փոխարեն ուղարկում են աղետի գոտու համար նախատեսված ավերված և ջարդված տնակներով և հոտած սննդամթերքով լեփ-լեցուն վագոններ...

Օրինական հարց է ծագում՝ մինչև ե՞րբ պետք է շարունակվի խորհրդային երկրում իր նախադեպը չունեցող քաղաքական, տնտեսական և բարոյական ճնշումը Խորհրդային Հայաստանի նկատմամբ և մինչև ե՞րբ կենտրոնական հեռուստատեսությունը պետք է շարունակի լռությամբ և կեղծ լրատվությամբ աղավաղել բոլոր փաստերը:

ՆԿԱՐՆԵՐՈՒՄ.— ⊗ Տեղ են հասել այնքան սպասված տնակները:

⊗ Որդնած կարտոֆիլը որպես անասնակեր էլ չի ծառայի:

Լուսանկարները՝
Մ. ՋԱԼԱՆԹԱՐԻ
(Արմենպրես)